


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պորոյ 4 մր. 8 Մճ.
Գաւառաց 10 Մճ.
Վեցամեայ Կ. Պորոյ 4 Մճ.
Գաւառաց 5 Մճ.
Գաւառաց 5 Մճ.
Մար 3 զուրու, երկու տեղամի հա.
Մար 2 զուրու, աւելի անգամներու
համար գատ ստիպարի թիւն կըլ-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 18 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկու երեք օրէ 'ի վեր միտքերը վրդովող հեռագրեր կառնուին և զորոյնք կը պտըտին : Ասոնց ամենէն նորերն Սթանս Հովասին Լոնտրայէն մարտ 28 թիւով երկու հեռագրերն են, որոց մին կը ծանուցանէ թէ երեքշաբթի իրիկուն Անգղիական կառավարութիւնը Ռուսիոյ կողմէն ծանուցագիր մ'առաջարկէ, որ Այսթեֆանոսի դաշնագրութիւնն ամբողջապէս տեղութեանց խորհրդին ներկայացնելու առաջարկը կըմերժէ, և Եւրոպիոյ իրաւասութեան դուրս գտնուող պայմանները վիճարկելու թեան չգնելու մասին Ռուսիոյ իրաւունքը կը պաշտպանէ : Անգղիոյ և Ռուսիոյ մէջ ծագած այս ծանր անհամաձայնութեան պատճառաւ կը կարծուէր թէ տեղութեանց խորհրդին գումարումն ետ պիտի մնայ, երկրորդն է՝ Անգղիոյ պահեստի զօրաց 'ի ղէն կոչուին և այս պատճառաւ Լորտ Տէրպին հրաժարումը : Այս երկու հեռագրաց ծանրակշիւթիւնն անհնար է ժըլտել, բայց ասոնցմէ չհետեւիր թէ Անգղիոյ և Ռուսիոյ մէջ պատերազմ մըն անհրաժեշտ եղած ըլլայ : Երեքշաբթի օրը Լոնտրա Ռուսական ծանուցագիր մը հասնելու եղելով թիւնըն իսկ կը ցուցնէ թէ յիշեալ տեղութեանց անհամաձայնութիւնը բանակցութեան առարկայ է, և կարելի է որ վայրկեանէ վայրկեան համաձայնութիւն մը հաստատուի : Պիտմարք իշխանին և Անտրասի կոմսին վերջին պաշտօնական յայտարարութիւններն յուսադիր էին այս մասին :

Կորչաքով իշխանին պէս ամենանախադրար պետական մարդ մը «թեթիւ սիրտով» Եւրոպիոյ իրաւասութեան իշխանը չանդունէր : Մինչև հիմայ Եւրոպիոյ կարծեաց նկատմամբ յարգանքը վարուեցաւ, թէ և Ռուսաց ազգային մասը կը պնդէր թէ Ռուսիոյ արեւմտ և զոհողութեամբ ձեռք բերած դաշնագրութիւն մը ամբողջապէս վերաքննութեան ենթարկել նուաաստութիւն մ'է իրեն : Բայց Եւրոպա իրաւունք և շահ ունի Արևելից մէջ, և Կորչաքով իշխանը չէր կրնար անգիտանալ զայս : Ռուսի Եւրոպիոյ հետ համաձայնի ուղեւուն պատճառաւ ըլլալու է անշուշտ իկնաթիւթով զօրավորին նորէն յատուկ պաշտօնով վիճենաւ ուղևորելը : Տէյլի թէյէկրաֆի Անգղիական լրագիրը կը ծանուցանէ թէ Բրիտանական կառավարութիւնը կը պահանջէ որ դաշնագրութիւնն ամբողջ ներկայանայ Եւրոպական մեծ տէրութեանց, որ պէս զի ասոնք քննելով որոշեն թէ ընդհանուր շահույ՝ այսինքն Եւրո-

պիոյ, և մասնաւոր շահույ՝ այն է միայն Ռուսիոյ և Թուրքիոյ իրեւ պատերազմող տէրութեանց վերաբերեալ կէտերն որոնք են : Մինչև որ այս պայմանը չընդունուի և դաշնագրութեան պայմանները բարեփոխելու կամ ջնջելու մասին տէրութեանց իրաւունքը չճանչուի, Անգղիա տեղութեանց խորհուրդին չպիտի մասնակցի : Անգղիոյ այս առաջարկութեան Կորչաքով իշխանին տարիք պատասխանը կ'ապաստէր, ուստի երեքշաբթի օրը Լոնտրա եկած ծանուցագիրն այն ըլլալու է : Բայց պէտք չէ մոռնալ որ անկէ առաջ Կորչաքով իշխանը դաշնագրութիւնը տէրութեանց ներկայացնելու բացարձակապէս չէր մերժեր, այլ կը ծանուցանէր թէ մասնաւոր պայտօնատարներ զրկելով իրենց պիտի հաղորդէր զայն իսկ Անգղիա ասով չէր գոհանար, և այս առաջին քայլէն ետեւ՝ դաշնագրութեան վիճարկութեան ենթարկելը կը պահանջէր : Դաշնագիրը տեղութեանց անհատապէս հաղորդելու և 'ի խորհուրդ գումարումը պատուիրակաց ներկայացնելու մէջ մեծ տարբերութիւն մը չկենտրոն, չյուսացուիր որ Կորչաքով իշխանը մէկէն 'ի մէկ իմիտ գիրք մը բռնէ : Բայց եթէ տէրութեանց խորհուրդէն առաջ կամ անոր մէջ անհամաձայնութիւն ծագի՝ ինչ պիտի ըլլայ : այս խնդիրը նախադուշակել անկարելի է, և պէտք է ուստի որ դէպքերն իրաց երբն երևան հանեն : Լրագիր մը կըսէ թէ Պ. Պիտմարք Պէրլինի Անգղիական դեսպանին հետ խօսակցելով ըսեր է թէ «Անգղիա պէտք է իմայնէ թէ իրեն դպրոց կէտը ո՞րն է, որպէս զի անոր դարմանը նայուի : Անգղիոյ համար կարեւորութիւն ունեցող կէտն է Հնդկաստանի ճանապարհը, որ Սուէի շի ջրանցքէն և Եգիպտոսի մէջէն կանցնի, ուրեմն կրնար Եգիպտոսը դրաւել : Բայց լրագրաց հրատարակած այսպիսի խօսակցութիւնները վաւերականութեան դրոյմ չեն կրեր, ասկէ դատ՝ Գաղլիա կը պահանջէ որ Սուրբիոյ Եգիպտոսի և Թունուզի իւրեք գիրները դեսպանախորհրդին չենրկայանան, և այս պայմանաւ յանձն կառնու մասնակցիլ դեսպանախորհրդին : Արդէն Անգղիայէն ապահովութիւն տուեր է Եգիպտոսը չզբաւելու : Անգղիա չկրնար ուրեմն այսպիսի բաժանման գաղափարներու հաւանութիւն տալ : Բայց Եգիպտոսի վիճակը բարեւոքելու մասին՝ Անգղիա և Գաղլիա կրնան համաձայն ըլլալ, և երկու կառավարութիւնը պահանջած և խնդրած են որպէս զի Եգիպտական կառավարութեան երամսից վիճակը քննուի :

Դեսպանախորհրդին մէջ Յունաստանին ընդունուելուն առաջարկութիւնը՝

զոր Անգղիաներկայացուցած էր, Եւրոպական տէրութեանց կողմէն լաւ ընդունելութիւն կը գտնէ : Վիէննայի Ֆրէմոնտի լրագիրը կըսէ թէ Աւստրիա տրամադիր է հեղինակաւոր տարրին նոյն օգուտները տալ, զոր Սլավ տարրը կ'ստանայ : Ռէքլայիք Ֆրանսէզ Գաղլիական թերթն յիշուտարի առաջ Յունաստանի անիրաւութիւն մ'եղած կը համարի անոր անկախութեան համար պատերազմող դաւաճներուն՝ այն է Թեսալիոյ Եգիպտոսի և Կրետէի դուրս ձգուիլն, և Ելլադայի այնչափ փոքր կազմուիլն : Դժբաղդաբար, ինչպէս մինչև ցարդ քանի անգամ ըսած ենք, յաւալի է որ Եւրոպա մի միայն ապրատամութիւն ընող քրիստոնէից վիճակն իրապէս բարեւոքելու ջանք կընէ : Իսկ խաղաղ և հլու ժողովրդոց նկատմամբ բոլորովին անտարբեր և անհոգ կը գտնուի : Կամ թէ անոնց վիճակին բարեւոքումը նկատողութեան առնու, պարզապէս խօսքով կը գոհանայ : Ահաւասիկ Հայերն, որք Յունաստանի թագաւորութիւնը կազմող հեղինակներն աւելի բազմաթիւ են, բայց իբրեւ ամբողջ մարմին իրենց վրայ բնաւ ուշադրութիւն ընող չկայ : Ստոյգ է որ Այսթեֆանոսի դաշնագրութեան 16 ըդ. յօդուածն Հայոց կը վերաբերի, սակայն տակաւին Հայոց արժանաւոր կարեւորութիւնն Եւրոպա ճանչած չէ : Այսու նկատմամբ գոհութեան արժանի է ներկայ մարտի թուականաւ Լոնտրայի մէջ Անգղիերէն լեզուաւ հրատարակեալ «Հայք և Դեսպանախորհուրդ» անուն տետրակ մը, ուր Հայոց գաւառ արժանապէս պաշտպանուած է, առանց թուրքիոյ ամբողջութեան, անկախութեան և վեհապետական իրաւասութեան դպչելու : Տեղադրուին հեղինակը կըսէ թէ Ռուսիոյ պաշտպանութեան ներքեւ Պուրպաղաց և ուրիշներու շնորհւած արտօնութեանց նայելով, Հայերն 'ի խոր սրտէ կը ցաւին իրենց վշտաց և բաղձանաց նկատմամբ Եւրոպիոյ և մանաւանդ Անգղիոյ անտարբերութեան վրայ : Մարդկութեան տեսակէտով Պուրպաղի պատմութիւնն Հայաստանի պատմութեան չափնկատողութեան արժանի է : Հեղինակն Հայոց ազգին հնութիւնն և քրիստոնէութեան ու քաղաքակրթութեան մատուցած մեծամեծ ծառայութիւններն յայտնելէ ետեւ, Արժանապատիւ Տ. Քրիսթիան Ռայմը լրագրին մէջ հրատարակած մէկ նամակէն հատուած մը յառաջ կը բերէ, որ կը ծանուցանէ թէ Հայք թուրքիոյ մէջ 3 միլիոն են, Ռուսիոյ մէջ 1,100,000 և Պարսկաստանի մէջ 430,000 : Հայք մինչև Հնդկաստան ցրուած են, և Լորտ Պայրլին վկայութիւնը կը յիշէ թէ «Գոհարին է գտնել ազգ մը, որոյ տարեգրու-

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գացած լրագրաց ճանրուածաբար խմբագրութեան վրայ է : Լրագրաց վերաբերեալ նախակէտով որ և իցէ, գրութիւնն խմբագիր — Տնօրէնին պիտի ուղղուի, Գաղաթիւս Ստեփանը ճառագէտ թիւ 198, Նորոյ խան, Մարտի գրասենեակը :
Հանրաւ ծախքը չվճարուած նախակէ չընդունուիր :

թեանց մէջ այնչափ նուազ ըլլայ Եւրոպական օրօր թիւնն, և որուն առաքինութիւնները խաղաղասիրութեան և մարտիկները բռնութեան արդիւնք ըլլան : Թէ Հայոց բազմը դառն եղած է, և իրենց երկրին ապագային ինչ որ ըլլայ՝ ուշադրութեան արժանի է : Վերջապէս այս տետրակն Եւրոպիոյ ուշադրութիւնը կը հրաւիրէ Հայոց վիճակին հիմնապէս բարեւորման, այսինքն Քիւրտերու, Չէքքէզներու և այլոց բռնութեանն ու հարստահարութեանց միանգամ ընդ միշտ վերջ տրուելու պէտքին վրայ : Առանց մեծահատոր գիրք մ'ըլլալու, տասն և ինն շէն բաղկացնող այս տետրակը կրնայ բաւել, եթէ Եւրոպա անոր պատշաճ կերպով ըսելու ականջ ունենայ :

ՀԱՅԳ ԵՒ ԴԱՇՆԱԳՐԱՅԻՆԻՆ
Այս մակագրով հետեւեալ հատուածը կը տեսնենք հինգ շաբթի իրիկուան 15 լինթ ձեւերով մէջ :
«Անգղիական թերթերը վերջին օրերս նամակ մը հրատարակած են, որ կերելի թէ թուրքիացի երեւելի Հայ մը դրած է իւր փառիք բնակող բարեկամներն մէկուն :
«Նախակց իրն Այսթեֆանոսի դաշնագրութեան 16 ըդ. յօդուածին պատճէնը կուտայ հետեւեալ կերպիւ :
«Նկատելով որ Ռուսական զօրաց «Հայաստանի մէջ գրաւած բայց թուրքիոյ վերադարձնելիք տեղերէն մեկը «նիլը կրնայ կուլնելու և երկու տէրութեանց բարեկամական յարաբերութեան վիճակներուն վրաս բերող կնճիւղներ :
«Բու ծնունդտայ, Բ. Գուրու պարտաւորութիւն յանձն կառնու Հայոց «բնակած գաւառներուն մէջ տեղա-
«կան պիտոյից պահանջած բարեւ-
«քումներն ու բարենորոգումներն
«առանց այլ ևս յապագիւրդ գործադ-
«րել, և Բիւրիւրուուն ու Չէքքէզներ-
«բուն դէմ անոնց ապահովութիւնն
«երաշխտուրել : »
«Այս առթիւ նամակագիրն հետեւեալ գիտողութիւնը կրնէ :
«Սոյն յօդուածով պայման դրուած է որ Բարձր Ասիոյ Հայաբնակ գաւառները՝ Բուսէիլի քրիստոնէաբնակ գաւառաց ունեցող վարչական ձեւն՝ այսինքն տեղական պիտոյից համաձայն բարենորոգումներ պիտի ստանան :
«Վարչական ինքնօրինութիւն չըստացող Բուսէիլի գաւառներն են՝ Եգիպտոս, Թեսալիա և Մակեդոնիա : Բայց ինչպէս որ այս երաշխտուրութիւնները չեն կրնար Յոյները գոհանցնել, որք վերջապէս ինքնօրինութիւն պիտի ստանան, նոյնպէս և Հայոց պիտոյն ու բաղձանքներն այդ տարտամ կերպիւ պայմանագրեալ բարենորոգումներով չեն կրնար ապահովել : Ինքնօրինութիւնը միայն կրնայ անոնց պիտոյն երաշխտուրել :

Այս միջոցին տեղի ունեցած միութեան թեմանց առջին Հայոց ազգը պարզ հանդիսառեւ չկրնար կենալ: Օսմանեան կայսրութեան մէջ բռնած դիրքովը զօրացեալ, և ընծայած կազմական տարերայ վրայ վստահ, Հայ ազգը տէրութեանց խորհրդին պիտի դիմէ և իւր գտած պաշտպանէ, խնդրելով որ միւս քրիստոնեայ ժողովրդոց համար գործադրուելիք պայմաններն իրեն ալ տրուին: »

Ռուսական Էնկալիտ լրագիրն հետեւ կենսագրական տեղեկութիւնը կուտայ վերջին օրերս ժանտատենդէ բռնուելով մեռնող հայազգի Շէլքովիքի զօրավարին վրայ:

« Շէլքովիքի զօրավարն Հայ էր ազգաւ, 1855 ին Մոսկուայի զինուորական նախարկութեանէն ելնելով թիգանօթաձիգ զօրաց կարգը մըտաւ: Շէլքովիքի պատանին իւր զինուորական ասպարիզին առաջին տարիները կովկասի մէջ անցուց, ուր երկրին արեւելեան լեռնականաց դէմ միջուած պատերազմներուն մասնակցեցաւ: Յետոյ Նիքոլայի զինուորական ճեմարանը մտաւ, և իւր ուսմանքն աւարտելէ ետեւ սպայ սկստի պաշտօնական անուանեցաւ: 1863 ին փութեան մասնակցութիւն մ'ունեցաւ Լեհաստանի աշտարակութիւնը զսպելու գործին մէջ, և վերադարձաւ իւր մասնաշարժ ծառայութեանց փոխարէն Ս. Գեորգիայ չորրորդ խաչնշանն և Վլադիմիրի պատուանշանն ստացաւ հանգերէս օրով և ծառայելով: 1865 ին Զաքարթալայի, և 1875 ին ալ Սե Ժովա չրջանակին հրամանատար անուանեցաւ: »

« Ներկայ պատերազմին ժամանակ Շէլքովիքի գնդապետը պաշարեւտութեան ու քաջութեան նշանաւոր մարտիկ տուաւ կովկասի տարեման ծովերը, պաշտպանելով: Կիսարաժին զօրավար անուանելով, Սոխու մի զօրապետին հրամանատարութեան կոչուեցաւ, յետոյ Հայաստանի բանակը կոչուեցաւ, ուր յարձակող գունդի մը հրամայելով Արածա—Տաղի ճակատամարտին մէջ փառք ծածկուեցաւ: որոյ համար Ս. Գեորգիայ երրորդ խաչն ստացաւ: »

« Կարմիր չրջանակին զինուորական կառավարիչ անուանելով, Շէլքովիքի զօրավարն իւր նոր պաշտօնը վարել սկսած էր, յանկարծ ժանտատենդէ բռնուելով՝ մեռաւ ծաղիկ հասակին մէջ: »

Նոյն լրագիրը կը ծանուցանէ նաեւ թէ կիսարաժին զօրավար հայազգի Բօհան (Ժան) Լօրիս Մէլիքի զօրավարն ալ ժանտատենդէ բռնուելով մեռեր է:

Փարիզի թան լրագրին Բեդրեյուպուրի թղթակիցը՝ Ռուսաստանէն Փարիզի յառաջիկայ արուեստահանգիւստին զրկուած նկարներուն վրայ տեղեկութիւն տալու առթիւ՝ հետեւեալ տողերը կը գրէ:

« Ռուս նկարչութեան արքայական գաւազանը Պ. Յ. Ալփազովսքին բռնած է միշտ: Եթէ կայ Ռուս նկարչութեան գալուց մը, գրեթէ Հայազգի մէջ և գործարանը Գրեթմիլը սիրէ ծովը, պէտք չունի մեզ սովորեցնելու որ սիրենք զայն: Բայց վեհ կերպիւ և կը նկարէ, և անոր արպատութիւնները մեզ կը վերադարձնէ: այն ժամանակ կրկնակի կը սիրենք, թէ՛ նոյն իսկ իրեն համար և թէ՛ ներշնչած գործերուն համար: Արդ կը ծանուցանեմ ձեզ թէ Պ. Ա. յ.

վաղուքին չորս տարի կը զրկէ արուեստահանգ իրեն: 1. Սե Ժովա Ե. զերայ վրայ բանաւորէ մը: 2. Նարոյի նաւահանգստին մէջ մէգ մը: 3. Ոչխարայ՝ ծովու մէջ լուսացելով՝ կտուրէն առաջ: 4. Արշակունի զազոսի մէջ գիշեր մը և Վլադիմիր Ե. Ե. Ե. յետոյ ծով մանեւ: Լուսնապատկերը շատ հաճուեցաւ Բեդրեյուպուրի մէջ: Արշակունի զազոսի մէջ գիշերն ալ հրաշալի կերպիւ վեհ և պայծառ է: Ըստ իմ կարծեաց՝ Ռուսական նկարներուն մարգարէն է, որոյ հետ կրնայ միջիլ Սե Ժովա Ե. զերայ վրայ մը: Երկրի պատկերը Արշակունի խնդրը մէկ դի, այս երկու նկարներն ուր երկրէ և երկրէ ըլլան, պարծանք են այն երկրին: »

ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՑ

Բեդրապուրի պաշտօնական Մէսսօք Լրագիրն իւր մարտ 9/21 թիւ թերթով հաշտութեան նախապայմաններուն աւելցնելով պատճէն հրատարակած ըլլալով, Ա. Ժան. Հալաւ ալ անոր ճիշդ խնամքն և բողոքական լրագրաց հաղորդած է:

Ահաւասիկ թարգմանութիւնը:

Յօդ. 1. Գարատալ անկախ կը հրատարակուի և կ'ստանայ Կաջքօ, Ռիշով, Ռոսնալ, Նիքոլէ, Սուրը, Բոտիօրիցա և Զապիլաք քաղաքները: Պայանա գետին նաւարկութիւնն Եւրոպական յանձնախորհրդոյ մը միջոցաւ պիտի կարգադրուի:

Յօդ. 2. Երան հետ Գարատալի յարաբերութիւններն ետքէն պիտի կարգադրուին: Եթէ վեհ կամ անհամաձայնութիւն ծագի, Աւստրիոյ և Ռուսիոյ ձեռքը պիտի կարգադրուի:

Յօդ. 3. Սերվիա անկախ կը ըլլայ, և Նիքը, Տրիւնայի հովիտն և Փոքր Զօրնիքը կ'ստանայ:

Յօդ. 4. Միշնէ որ Սերվիոյ և Գրան մէջ հաստատուելիք յարաբերութիւններն որոշող դաշնադրութիւնը կնքուի, Սերվիայից թէ՛ Եւրոպիոյ և թէ՛ թուրքիոյ մէջ միջադպրոց օրինաց համեմատ պիտի նկատուին: Սերվիայից թուրքիոյ միջոցաւ տեղերէն պիտի ըլլան: Մասնաւորական պիտի կրնան իրենց շարժական ինչքը պահպանել: Թուրքօ—Սերվիական յանձնախորհուրդ մ'երկու տարուան մէջ պիտի կարգադրէ կառավարական ստացւածոց վերաբերեալ խնդիրներն: Երեք տարուան մէջ ալ պետութեան և եկեղեցեաց վերաբերեալ (վաղը) անհարժ ստացուածոց վաճառուի:

Յօդ. 5. Ռուսական անկախութիւն կը ստանայ: Պատերազմական հաստուցում մը ստանալու իրաւունքն երկու կողման մէջ վիճաբանութեամբ պիտի որոշուի: Ռուսական հաստակները թուրքիոյ մէջ նոյն իրաւունքները պիտի ունենան, ինչ որ ունին ուրիշ տարածքներէ հպատակներն:

Յօդ. 6. Պաշտպան ինքնօրէն հարկաւ տու իշխանութիւն մը պիտի ըլլայ քրիստոնեայ կառավարութեամբ և ազգային զինուորութեամբ: Պաշտպան վերջնական սահմանը թուրքօ—Ռուս յանձնախորհուրդոյ մը ձեռքը պիտի գծուի՝ Ռուսական զօրաց Ռուսիայի մեկնելէն առաջ: (Գաշնադրութեան բնագրին երկրացոյց քարտէս մը կցուած է):

Այս սահմանը Վառնայից Գալաթի, իրապիտի երթաց, Գարատալէ Գարատալիցէն և Կարմուս լեռներէն, Մոսկուանից և Վարադա գետերուն իրար խառնուած տեղէն մինչև Պէշկէ—Կէօլի մէջ տեղը, և Գարատալ հետ մինչև ծովերը հասնելով, պիտի անցնի Գալաթի ծովածոցէն Պարթիօրէն և Զալթէրէ լեռան գոտիէն մինչև Բոսօրէ լեռն, և Արատալա գետն անցնելով Արքիանուպոլիս քաղաքը մէկ կողմ պիտի թողու, և Լեւոնտէ Պարթիօրէն Սե Ժով պիտի հասնի, մինչև Էնքիմ Թապեասի և անկէջ Մոնկալ լեռ պիտի երկնայ և թուրքիոյ գաւառին սահմանագծէն անցնելով Պատմայի տակէն պիտի հասնի Գանուր:

Յօդ. 7. Պաշտպան իշխան երկրին ժողովրդէն պիտի ընտրուի ազատաւար և Սուլթանէն պիտի հաստատուի: Տէրութեանց ալ հաւանութիւնը պիտի ըստանայ: Մեծ տէրութեանց ազատուհ:

մերէն ոչ միայն մէկ անգամը չպիտի կըրնայ ընտրուիլ: Պաշտպան ազգային ժողովը թրնովա կամ Փիլիպէ պիտի գտնուի՝ երկրին նոր կազմութիւնը տալու համար, որ 1850 ին Գանուրեան դաւառաց մէջ հաստատուածին պէս պիտի ըլլայ, իշխանին ընտրութեան ներքեւ Թուրք տեսչի մը ներկայութեամբ: Նոր կառավարութեան հաստատութիւնը Ռուս տեսչի մը պիտի յանձնուի մինչև երկու տարի: Տարիէ մ'ետեւ ուրիշ տէրութեանց լիազօր պատուիրակներ ալ կրնան մտնանալ ինչ Եւրոպիոյ դատուի: Երբոր իշխանական աթոռը թափուր մնայ, նոր իշխանը դաշնադրութեան մէջ հաստատուելու ձեռք համեմատ պիտի ընտրուի: Թուրքերը, Յոյներն և Վալաքներն ալ պիտի մասնակցին այս ընտրութեան: Յատուկ կանոնադրութիւն մ'անոնց իրաւունքներն ի հաշիւ պիտի առնուի:

Յօդ. 8. Թուրք զօրքը կը քաշուի Պաշտպանէն: Բոլոր բերդերը պիտի քանդուին չրջակայ երկրին ծախիւք: Միշնէ որ ընկի զինուորութիւն մը կազմուի, այսինքն մինչև երկու տարի, Պաշտպան պիտի գրաւի Ռուսերէն, որք վեց բաժին հետեւեալ և երկու բաժին հեծեալ պիտի թողուն, ընդամենն 50000 մարդ առ առաւել, որք Պաշտպան ծախքով պիտի հոգացուին:

Գանուրի ամրոցներուն, Եւրոպիոյ և Վառնայի պատերազմական նիւթերը Դըրան տրամադրութեան ներքեւ պիտի ըլլան: Պաշտպան մէջ սպասող Ռուս զօրքերը՝ Ռուսական Վառնայի և Պաշտպան ձեռքով պիտի հաղորդակցին Ռուսիոյ հետ:

Յօդ. 9. Տարեկան հարկը Պաշտպանի միջին հաստութիւն վրայ պիտի հաստատուի թուրքիոյ Ռուսիոյ և միւս տէրութեանց համաձայնութեամբ: Պաշտպան Ռուսիոյ—Վարնայի երկաթուղին ընկերութեան նկատմամբ թուրքիոյ ունեւած պարտաւորութիւններն իւր վրայ կ'առնուի: Պաշտպան և Բնիկերութեան մէջ համաձայնութեամբ կնքուած կարգադրութեան մը համեմատ: Միւս վիճելի կէտերուն համար յետոյ որոշուեց պիտի ըլլան:

Յօդ. 10. Գուրն իրաւունք ունի զինուորական ուղի մը շինելու: Պաշտպան անդին դառնաւ Օսմանեան գաւառները զօրք և ռազմամթերք փոխադրելու համար: Թղթատարական և հեռագրական հաղորդակցութեանց վերաբերեալ խնդիրներն յառուկ յանձնախորհրդոյ մը միջոցաւ պիտի կարգադրուին:

Յօդ. 11. Իպաններն իրենց հողային սեփականութիւնները պիտի պահեն թէ և իրենց Պաշտպանային մեկնին: Սերվիականութեան վերաբերեալ խնդիրներն յանձնախորհուրդ ձեռքը պիտի կարգադրուին: Երկու տարի անցնելէ ետեւ, սեփականութիւնը պիտի վաճառուին և արդիւնքը պիտի բաշխուի Պաշտպան պատերազմին թաղուած օրերուն և այլի ներքեւ, որք թուրքիոյ մէջ կը բնակին Օսմանեան օրինաց ներքեւ:

Յօդ. 12. Գանուրի բերդերն հարկաւ տակ պիտի ըլլան: Գանուրի վրայ ամրութիւններ չինել և գետին մէջ պատերազմիկ նաւեր դնելն արգիլեալ է: Մաքսի և օտարիկանութեան նաւերը միայն կրնան չրջիլ անոր մէջ: Գանուրի միջադպրոց յանձնախորհրդին արտօնութիւններն անեղծ կը մնան:

Յօդ. 13. Գուրն Սալոնիկի բերանը կը վերահաստատուի և օսմանուրաց կրած վնասները կը հատուցանէ:

Յօդ. 14. Պաշտպան և Էնքիմ մէջ անմիջապէս պիտի գործադրեն այն բարեկարգումներն՝ որք Կ. Պաշտպան պատմախորհրդին առաջին նախնի մէջ որոշուած են, և այն ալ՝ Ռուսիոյ և Աւստրիոյ հաւանութեամբ: Եւ մնացած տուրքերը չպիտի պահանջուին բնակիչներէն: Իսկ սպասող տուրքերն ալ ուրիշ տեղեր փոխադրուեցան վնասներն հատուցանելու պիտի գործածուին մինչև 1880 մարտ 1:

Յօդ. 15. Վերջին մէջ 1863 ի կազմաւորութիւնն ամենաճիշդ կերպիւ պիտի գործադրուի: Նախնորին կազմաւորութիւն մը պիտի հաստատուի Նախնոր և Թուրքիոյ գաւառաց և Եւրոպական թուրքիոյ միւս մասոնց մէջ:

Այն կազմաւորութեան մանրամասնութիւններն յառուկ յանձնախորհրդի մը ձեռք որոշուելով Գրան քննութեանը պիտի յանձնուին, որ զայն գործադրելէ առաջ Ռուսիոյ կարծիքն ու հաւանութիւնը պիտի ստանայ:

Յօդ. 16. Նկատելով որ Ռուսական զօրաց Հայաստանի մէջ զրաւած բայց թուրքիոյ վերադարձնելիք տեղերէն մեկնելը կրնայ կոխներու և երկու տէրութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնճիւղներու ծնունդ տալ, Գուրն պարտաւորութիւն յանձն կ'առնուի Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարեկարգումներն ու բարեկարգումներն առանց այլ ևս յապաւելու գործադրել, և Քիւրդերուն ու Զէրքէ վնասներն դէմ անոնց ապահովութիւնն երաշխաւորել: »

Յօդ. 17. Լիակատար ներում պիտի չնորհուի:

Յօդ. 18. Գուրն լրջաբար նկատողութեան պիտի առնուի (Պաշտպանին սահմանակից) Քիւրդերը քաղաքին սեփականութեան մասին միջնորդ տէրութեանց գործադրողներուն կարծիքն և թուրքօ—Պաշտպանին սահմանադրիկն որոշման տեղեկացելով պիտի գործադրէ:

Յօդ. 19. Վարնալիք պատերազմական տուգանքն 1410 միլիոն ռուպլի ուրոյն է, որոյ 900 միլիոնը պատերազմական ծախուց համար, 400 միլիոնը վաճառականութեան կրած վնասուց, 100 միլիոնը Կովկասի ապստամբութեան, 10 միլիոնը թուրքիա բնակեալ Ռուսաց կրած վնասներուն և թուրքիոյ վերակազմութեան ծախուց համար պիտի վճարուի:

Յօդ. 20. Ռուսիոյ կայսրն Օսմանեան պետութեան երմտական ներ վիճակը նըկատելով և Սալոնիկին յայտնած բաղձանքն ընդունելով, կը հաճի որ զրաւական տուգանաց տեղ Բուժմէի կողմէն թուրքիոյ գաւառը տրուի Ռուսիոյ (որ կրնայ Պատարապիոյ հետ փոխանակիլ), Սալոնի կողմէն ալ Արտահան, Կարս, Պաթլում, Պայագիտ մինչև Սոդանը—Տաղ: »

Ռուսիոյ թողուցած երկրներն ու ընդունելներն 1100 միլիոն ռուպլի հաշուելով, մնացեալ 510 միլիոնին վճարումն յետոյ պիտի կարգադրուի:

Յօդ. 21. Գուրն պարտաւորութիւն յանձն կ'առնուի Ռուս հպատակաց կախ մնացած պահանջումները բարեկամաբար կարգադրելու: Ռուսիոյ թողուած երկրներուն բնակիչները կրնան իրենց զոյքը վաճառելով մեկնել այն տեղերէն:

Յօդ. 22. Ռուսաց դեսպանատունն ու հիւպատոսարանները պաշտպանութիւն պիտի ընեն Ռուս ուխտաւորաց և կրօնաւորաց, և անոնց թուրքիոյ մէջ ունեցած ընչին: Աթոս լեռան (Ս. յօրոյ) կրօնաւորներուն արտօնութիւններն անվթար պիտի պահուին:

Յօդ. 23. Գաշնադրութիւններն ու պայմանադրութիւնները պիտի վերահաստատուին:

Յօդ. 24. Ներուցները թէ՛ պատերազմի և թէ՛ խաղաղութեան ժամանակ բաց պիտի մնան չեղած տէրութեանց նաւերուն: Գուրն չպիտի կրնայ կեղծ պաշարումներ հաստատուի Սե Ժովա մէջ:

Յօդ. 25. Եւրոպական թուրքիոյ հողը գրաւող Ռուս զօրքերը վերջնական հաշտութեան կնքուելէն մինչև երեք ամիս պիտի մեկնին: Ասոնց մէկ մասը Սե Ժովա, Մարմարայի և Տրապիզոնի նաւահանգիստներէն չողենաւ պիտի նստին, իսկ Սալոնի գաւառները գրաւող Ռուսական զօրքերը մինչև վեց ամիս պիտի մեկնին:

Յօդ. 26. Ռուսերէն գրաւեալ Օսմանեան երկրներուն կառավարութիւնը Ռուսաց ձեռքը պիտի ըլլայ մինչև որ մեկնին:

Յօդ. 27. Գուրն խաղաղ կուտայ շնչելու այն Օսմանեան հպատակներն՝ որք Ռուսական զօրաց հետ յարաբերութիւն ունեցած են:

Յօդ. 28. Պատերազմական դերաց արձակուրդը դաշնադրութեան վաւերանշանն ետեւ տեղի պիտի ունենայ: Երկու կողմանէ կարգեալ գործակալները գրեւեաց փոխանակութիւնը պիտի կատարեն Օտոսայի և Մէլաթիօրի մէջ: Գուրն մը պիտի հաստատուի սահմանութիւն քառամսեայ պայմանաւորութիւնով պիտի վճարէ թուրք պերիներուն համար կրած ծախքը:

* Թերեւս Վառնան ըսել կուզէ, որ մեծ Միլիթրիկին եղբորդուցն անունն է: Գ. Խմբ.

ԹԵՄԱԲԱՆՈՒ ՔԱՐԹԱՆԳԱՅԻՆ

Այս պատմական գիրքն այս անգամ չորս հատիկով է հանձնվում...

Գիրքը կազմակերպվել է 316 երեսների վրա...

ԽՈՐՀՐԳԱՆՈՐ ԿԴՁԻ

ԲՆԱԿԱՆՈՒ ՄԱՐԿԻ

Ժողովը վերջին անգամից հեղինակներին...

ԱՐԽԱՆԱԼԻ ՄԱՐԿԻ ԶԱՆԴԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱՆԱԼԻ

ՏԱՆԻՆԻՆԻ

Թարգմանեց իսկ Պարոնյան պատմիչը

Սոյն գեղեցիկ վիպակները հանդիսանում են...

ՈՒՅՑԱՆԻ ՊԵՐՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ

Պարոնյան, Մանուկյան, Զաքարյան, Այվազյան...

Հեղինակները ինչպես նաև ուսանողները...

Կը ծախվի Երևան-ձամբի Զինվորական...

Գին 1 քառանգ թուղթ

ԺՕԶԵՑ ՊԱՆՍԱՄՈ

ՀԱՅԿԱՆԱԼԻ

ԱՆՔԱՆՈՒՄԻ ՏԻՒՄԱ

Թարգմանեց Գ. Խաչատրյան

Այս պատմական գիրքն այս անգամ չորս հատիկով է...

Կը ծախվի Երևան-ձամբի Զինվորական...

Ամբողջ գործը ութ հատորից է...

ԶԱՆԴԱՆՈՒ ՔԱՐԹԱՆԳԱՅԻՆ

Գրեց Երևանի Գաբրիել Պատկանյան

Ընթերցատեղի ազգային, որ անշուշտ ազգային տաղանդաւոր հեղինակներին...

Կը ծախվի Ս. Դ. և Խաչատրյան գրատունը...



ՇԻՐԻԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻԻ ԺԱՄԵՐԸ

1878 ՄԱՐՏ 1 ՉՈՒԿԵՆԱԿԱՆԵՐՈՒ ՕՐԻՆ ՍԿԱՆԱԼ


ՄԻՆԶԵՐԻ ՄԱՐՏ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and Բանալիներ (Items). It lists various goods and their prices.

ԿԱՌԱՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԶՈՒՄԱՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and Կարգադրություններ (Orders). It lists specific orders and their details.



ԶՐԱՆ

Ամերիկայի ջրհանները մեծ և փոքր, երկաթե և փայտե...



ԿԱՐԻ ԴՈՐԹԻՐ

Փոքր և մեծ խոշոր կոշտ և ճուրջ գործեր...

Բովանդակ կը կարգու գրեն ու գրեն այս...



ՍՈՒԹԵՆԻ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երեխայի ծնանքից մինչև...

Table with 2 columns: Ժամ (Date) and Կարգադրություններ (Orders). It lists various goods and their prices.

ԻՍԿԻԿԱՆԱԿԱՆ ԲԱՆՈՂ ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Կարգադրություններ (Orders), Կարգադրություններ (Orders), Կարգադրություններ (Orders). It lists various goods and their prices.

ՈՒՐԱՅԻՆ ԵՎ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), Կարգադրություններ (Orders), Կարգադրություններ (Orders), Կարգադրություններ (Orders). It lists various goods and their prices.

Այս քաղաքը շարաքի երեք անգամ...

Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգա...

ԵՋՄԻՐ. Խաչատրյան ազա Տէախան.

ՆԻԿՈՍԻՒՄ. Խաչատրյան Լ. Խաչատրյան.

ՊՐԻՆՍ. Խաչատրյան ազա Թախախան.

ԹԵՐԵՐՍԿԱՂ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.

ՍԵՐԱՊԻՏԱՆ. Խաչատրյան ազա Խաչատրյան.